ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

19.05.2025թ. **Սևան համայնք, Վարսեր բնակավայր**

Ս/թ մայիսի 19-ին, ժամը 14:00-ին, Սևան համայնքի Վարսեր բնակավայրի վարչական շենքի դահլիճում <<Առողջ միջավայր>> բազմաֆունկցիոնալ խաղահրապարակի կառուցման վերաբերյալ տեղի ունեցավ հանրային քննարկում՝ մասնակցությամբ հայտը ներկայացնող Սոֆյա Պետրոսյանի, Վարսեր բնակավայրի վարչական ղեկավար Սիմոն Սեդրակյանի, Սևան համայնքի ավագանու անդամ Նվեր Սեդրակյանի, մանկապարտեզի և դպրոցի աշխատակիցների, համայնքի բնակիչների, քարտուղարությամբ՝ համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ Լաուրա Ավետիսյանի:

Լսեցին՝
<<Առողջ միջավայր>> բազմաֆունկցիոնալ խաղահրապարակի կառուցման առաջարկի հեղինակ Սոֆյա Պետրոսյանի զեկույցը.

- Վարսեր բնակավայրի առկա հիմնախնդիրներից են սպորտի զարգացման ու ժամանցի կազմակերպման խնդիրները: Բնակավայրում բացակայում են մանկական ժամանցի վայրերը: Ծրագիրը լուծում է սպորտի զարգացման, մանկահասակ, դպրոցահասակ երեխաների ժամանցի խնդիրներ: Կառուցելուվ բազմաֆունկցիոնալ խաղահրապարակ, նախ և առաջ կբարեկարգվի ու կկանաչապատվի տարածքը: Կկառուցվի ընդարձակ մարզադաշտ՝ նախատեսված ֆուտբոլ, բասկետբոլ, վոլեյբոլ սպորտային խաղերի համար: Այն պատված կլինի արհեստական խոտածածկով: Խաղահրապարակում կտեղադրվեն մանկական խաղասարքեր, զրուցարան - տաղավարներ, մարզասարքեր, զբոսանքի և հանգստի համար նախատեսված նստարաններ: Կկառուցվի ճեմուղի, սանհանգույց, լուսավորության ցանց: Տարածքը շրջապատված կլինի դեկորատիվ թփերով և բերքատու ծառերով: Եվ կոչ եմ անում բոլորին՝ ցուցաբերել ակտիվություն քվեարկության փուլում:

Արտահայտվեցին՝

1. Սևան համայնքի ավագանու անդամ Ն. Սեդրակյանը
- Գիտակցելով հարցի կարևորությունը, հավանություն եմ տալիս առաջարկին, պատրաստակամություն եմ հայտնում ծրագրի իրականացման համար:

2. Վարսեր բնակավայրի վարչական ղեկավար Ս. Սեդրակյանը
- Ուրախ եմ, որ երիտասարդները ակտիվություն են ցուցաբերում բնակավայրի զարգացման գործում: Ապագան ձերն է, ողջունում եմ ձեր նախաձեռնությունը, հավանութուն եմ տալիս առաջարկին և պատրաստ եմ աջակցել ծրագրի իրականացմանը:

3. Վարսերի <<Ժպիտներ>> մանկապարտեզի աշխատակից Լուսաբեր Միքայելյանը.
- Երեխաներն ու երիտասարդները կկտրվեն համակարգչային ու բջջային խաղերից, կվարեն առողջ ապրելակերպ, իրենց առօրյան կդառնա հետաքրքիր և բովանդակալից: Իրենց հանգիստը կկազմակերպեն նաև մեծահասակներն ու տարեցները:

Հանրային քննարկման բոլոր մասնակիցները հավանություն տվեցին նախագծին: Նշեցին, որ պատրաստ են ամեն հարցում աջակիցել բնակավայրի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացմանը:

Հայտը ներկայացնող՝ **Սոֆյա Պետրոսյան**

Արձանագրող՝ **Լաուրա Ավետիսյան**